ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի մայսի 6-ից 11-ը

Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետություն **(ք. Շենժեն) գործուղման արդյունքների մասին**

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Արևիկ Ջանազյան ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (Այսուհետ՝ ՀՀ ՊԵԿ) Հետբացթողումային հսկողության և ստուգումների վարչության մաքսային գործարքների և ռիսկերի վերլուծության բաժնի գլխավոր մաքսայն տեսուչ:

Մարիամ Գոգյան ՀՀ ՊԵԿ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (Այսուհետ՝ ՀՀ ՊԵԿ) ԱՏԳՄՍՀՎ պարզեցված մաքսային գործառնությունների սպասարկման բաժնի պետի տեղակալ:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետություն, ք.Շենժեն, մայիսի 6-ից 11-ը:

3. Հրավիրող կողմը՝

World customs organization (6th WCO GLOBAL AEO CONFERENCE) Համաշխարհային մաքսային կազմակերպության համատեղ Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետության մաքսային ծառայության հետ՝ լիազոր տնտեսական օպերատորների 6-րդ գլոբալ կոնֆերանսին մասնակցելու նպատակով:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Համաշխարհային մաքսային կազմակերպության նշված համաժողովի ժամանակ քննարկվելու և ուսումնասիրվելու են LSO ինստիտուտի ծրագրերի մաքսային ընթացակարգերի պարզեցման և մաքսային ոլորտին առնչվող հարցերը, ինչպես նաև

հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ-ում Լիազոր տնտեսական օպերատորների ինստիտուտը գտնվում է ձևավորման և վաղ զարգացման փուլում անհրաժեշտ և հատկանշական է միջազգային լայն փորձի ուսումնասիրումը և տեղայնացումը:

5. Քննարկված թեմաները՝

- Լիազոր տնտեսական օպերատորների ծրագիրը՝ որպես տնտեսական աճի և անվտանգության հիմնական շարժիչ ուժ:
- LSO ծրագրերը խելացի մաքսային համակարգ:
- LSO գլոբալ ճանաչում:
- LSO ծրագրերի կիրառման և արդյունավետության գնահատում:
- LSO ծրագրերի ապագան, մարտահրավերներ մաքսային համակարգի և տնտեսվարողների համար հաջորդ տասնամյակներում:
- Փոքր և միջին ձեռնարկություններ, մարտահրավերների հաղթահարում և մասնակցության խթանում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Տվյալ միջոցառման շրջանակներում պաշտոնական հանդիպումներ և ելույթներ չէր նախատեսվում :

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Տվյալ միջոցառումների շրջանակը չէր նախատեսում պայմանավորվածությունների ձեռքբերում կամ փաստաթղթերի ստորագրում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Լիազոր տնտեսական օպերատորների ծրագիրը նախատեսում է տնտեսական աճի խթանում, այն պետք է լինի ինչպես ՀՀ պետական եկամուտների այնպես էլ ՀՀ կառավարության մի շարք գերատեսչությունների՝ համատեղ լուծման ենթակա խնդիր:

ԼՏ օպերատորների ավելացման գործընթացը պետք է հետապնդի փոխադարձ շահ պետության և տնտեվարողների միջև:

Ըստ միջազգային փորձի՝ ինստիտուտի զարգացման նպատակով տնտեսվարողներին տրվում է շատ ավելի արտոնություններ և պարզեցումներ քան ՀՀ-ում՝ պահանջելով ներմուծումների քանակի, արտադրողականության և արտահանման աճ, ինչը պետք է հանդիսանա խթան երկրի տնտեսական վիճակի բարելավման գործընթացում :

Ոլորտը գրավիչ դարձնելու նպատակով բավականին միջոցներ են ուղղվում ճիշտ թիրախավորելու, գովազդի համար:

Ուսումնասիրելով միջազգային փորձը առաջարկվում է իրականացնել հետևայալ գործողությունները՝

ԼՏՕ ինստիտուտի հետագա զարգացման ուղղված քայլերի իրականացում, մասնավորապես՝ երկրների միջև միմյանց փոխադարձ ճանաչում, մաքսային մարմինների կողմից լրացուցիչ պարզեցումների տրամադրում ,ԼՏՕ հավաստագրի դիմումների ներկայացման և տրամադրման պարզեցված ծրագրային ապահովում, ամփոփ հայտարարագրերի կրճատված տվյալներ, մասնակի կամ միանվագ վճարման երաշխիքներ, ԼՏՕ ինստիտուտում ընդգրկել մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ինչպես նաև միջին և փոքր ձեռնարկություններին, որը կնպաստի նրանց ներմուծումների և արտահանումների ծավալների մեծացմանը, միաժամանակ ԼՏ օպերատորի մոտ իրավախախտումներ հայտնաբերելու պարագայում զրկել հավաստագրից, որը պետք է ուղեկցվի տուգանքի վճարմամբ:

Միջոցառման ընթացքում գործում էր նաև ցուցահանդես, որտեղ ներկայացված էր խելացի մաքսային համակարգի շրջանակներում բացթողնման գործընթացը պարզեցնող տեխնոլոգիաներ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Մարիամ Գոգյան

Արևիկ Ջանազյան

14.05.2024թ.